

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Առևս-ճապոնական պատերազմը.—Խաղաղութեան կօնժերէնցիան.—Գերմանիայի միտու մները Թիւրիայում.—Խորս զիւդի դէպէր.—Սուլրանին սպանելու փորձը:

Մինչ Ամերիկայի Միացեալ Նահանգների Պորտամուտ քաղաքում շարունակում են ռուս-ճապոնական բանակցութիւնները խաղաղութիւն կնքելու մասին, ճապոնական երկու բանակներ, Սախալինում և Կորէայում, աշողութեամբ զարգացնում են պատերազմական գործողութիւնները: Դեներալ Խասիգավան Կորէական Կիօն-Սիօնից առաջ է խաղում հիւսիս-արևելք և հասել է Տիւմէն գետին, որ բաժանում է ռուսական հողը կորէականից: Ճապոնական այդ գեներալի նպատակն է իհար-կէ Վլադիվոստոկը: Միւս կողմից արդէն յուլիսի 11-ին Սիրի-րիայի մայր ցամաքի վրայ իջան առաջին անգամ ճապոնացիները և հազար հոգով գրաւեցին Դե-Կաստրա ծովափնեայ աւանը: Յուլիսի 17-ին գեներալ Խարագուչին արդէն յայտարարեց որ ամբողջ Սախալին կղզին միացրուած է Ճապոնիային և կղզու վրայ մտցրուած է ճապոնական վարչութիւն: այսուհետև Սախալինում ընդդիմադրութիւն ցոյց առողջ ռուսական ամարուելու են ապստամբներ: Սախալինի ռուսաց նահանգապետ Լեապոլովը, 700 օֆիցիեր և 3200 զինուոր գերի ընկան յաղթողների ձեռքը: Յուլիսի 26-ին ճապոնացիները առանց որմէ արգելքի իջան Դե-Կաստրայից հարաւ Նիկոլա Կայսրի հրուանդանի մօտ և գրաւեցին Կոստանտինովսկիյ պահակավայրը: Մի քանի ժամանակ անց գրաւեցին և սուրբ Օլգայի ծոցը և այզպիսով Ռւառլեան երկրի ամբողջ ծովափը անցաւ ճարոնացիների ձեռքը՝ նրանք սկսել են իրանց գործողութիւնները արդէն Մեծն Պետրոսի ծոցում, այսինքն Վլադիվոստոկի ջրերում:

Խաղաղութեան բանակցութիւնները շարունակում են թէև, եղանակցութիւնների մասին պաշտօնական հաղորդագրութիւններ չկան, սակայն եւրոպական և ամերիկական ազդեցիկ թերթերի կարծիքով պէտք է լաւատես լինել դէպի արդիմք-

ները։ Այն յոյսը թէ բանակցութիւնները խաղաղութիւն կնքեւ-  
լով կը գերջանան մի քիչ աղօտուեց, երբ աշխարհը իմացաւ  
ո՛ռ յուզկիսի 10-ին թիերկում տեսակցութիւն ունեցան գերմա-  
նական և ուստաց կայսրնեղը։ 1896 թուականից Գերմանիան  
աշխատել է ուստաց արտաքին քաղաքականութեան մէջ թելա-  
դրողի դեր կատարել։ Բոլորին յայտնի է Վիլհելմի ձգտումը,  
Հեռաւոր և Մերձաւոր Արևելքում համաշխարհային դեկավար  
լինելու յաւակնութիւնները։ Միաժամանակ իրողութիւն է, որ  
վերջին տասն տարիների ընթացքում Գերմանիայի վաճառա-  
կանութիւնը և արդիւնագործութիւնը հսկայական քայլերով ա-  
ռաջ գնալով, Անգլիայի կողքին բուսել է մի զօրեղ, հաստատա-  
կամ ու շահասէր մրցակից, որի ախորժակները գրգռուած են  
թէ Մերձաւոր և թէ Հեռաւոր Արևելքի շուկաներով։ Իր նը-  
պատակներն իրագործելու համար Բիսմարկ-Մոլտկէի Գեր-  
մանիան ունի կողոսաալ ցամաքային ոյժ, իսկ Վիլհելմի ջանքե-  
րով նաև բաւական պատկառելի նաւատորմ։ Սակայն իրան  
ուժեղ զգալով հանդերձ, բիսմարկեան անսիրտ քաղաքագիտու-  
թեան հետեւող Վիլհելմը գիտէ զանազան դիպլոմատիական  
խաղերով և հաշիներով և թուլացնել իր նպատակների առաջ  
կանգնած խոշնդոտները, որոնց մէջ ամենախոշորներն են Ան-  
գլիան և Ռուսաստանը։ Առաջինը թուլացնելու համար, հրճուան-  
քով Վիլհելմ II-ը հեռագրներով խրախուսեց բօէրներին մի խի-  
զախ կոփու սկսելու։ Այդ կոռուի ժամանակ Գերմանիան շուապեց  
իր գործերը շտկել Թիւրքիայում։ Իզուր էին բօէրները սպա-  
սում որ Վիլհելմը խօսքից գործի անցնի և օգնի իրանց։ Նա  
նոյնիսկ չընդունեց Զախջախուած հանրապետութիւնների ծերու-  
նի ներկայացուցիչ նրիւրգերին։ այլևս նա մի որեէ բանի ծա-  
ռայելու անկարող էր... Հեռաւոր Արևելքում Գերմանիան աշխա-  
տեց կոռացնել Ռուսաստանը Ճապոնիայի հետ, և մէջտեղում  
կտորներ պոկել Զինաստանից։ Իր նպատակների համար Գեր-  
մանիան ամեն կերպ գրգռեց ոռուանգլիական ատելութիւնը,  
աշխատեց խանգարել բաց գոների քաղաքականութիւնը, Զի-  
նաստանում, որ ձեմնտու էր Անգլիային, Ճապոնիային և Մի-  
ացեալ-Նահանգներին, Այժմ երբ դժբաղդ պատերազմի շնորհիւ  
Ռուսիան սթափուած՝ կարող է վերադառնալ այն քաղաքագի-  
տութեան, որին նա հետեւել է մինչև Լոբանով-Ռոստովսկին, Մեր-  
ձաւոր Արևելքում, Գերմանիան կ'աշխատի դեռ զբաղեցնել նը-  
րան Հեռաւոր Արևելքում, որովհետև Թիւրքիան դեռ ևս ամբող-  
ջապէս չի դառել գերմանական շահագործութեան առարկայ և  
համիսլամական դիմակը չի դառել համագերմանական ձգտում-  
ների բէալ արտայայտութիւն, Աւելի ևս վտանգաւոր կը լինի

գերմանիայի զբութիւնը Թիւրքիայում, երբ Անգլիայում կառավարութեան ղեկը անցնի պահպանողականներից ազատականներին։ Իսկ այդ բանը օրից օր սպասում է, որովհետև անգլիական պահպանողականները պարլամենտում արդէն մի քանի անգամ պարտութիւն կրեցին և միայն Բալֆուրի երեսապընդութեան շնորհիւ ներկայ մինիստրութիւնը չտուաւ իր հրաժարականը։ Անգլիական ազատականները միշտ կողմնակից են եղել Անգլիայի մերձեցման Ռուսաստանին։ Իսկ երբ որ այդ իրավործուի, այդ երկու պետութիւնների կողմը կը լինի և Ֆրանսիան, որ այժմ երկուսի հետ էլ դաշնակից է Այն ժամանակ այդ երեք պետութիւններից սուլթանը հազիւ թէ գոնի քրիստոնեաների բնաշնչման սիստեմի համար այն քաջալերութիւնը՝ որ ցոյց է տալիս նրան Գերմանիան՝ միացած Աւստրիայի հետ Այս վերջինի մէջ համագերմանական պրոպագանդան ահազին նոուաճումներ է արել և զառամեալ ֆրանց Յովսէփի մահից յետոյ գուցէ Աւստրիան դառնայ Գերմանիայի մասերից մէկը։ Այն ժամանակ Բունան, Հերցոգովինան կուլ տուած Գերմանիային դժուար չի լինի հաստատուել և Սալնիկում, ինչպէս նա հաստատուել է այժմ Փոքր Ասիայի Հայդար Փաշայում, Մարմարա ծովի ափում... Պարզ է որ արևելեան հարցի լուծման համար ցանկալի է Անգլիայի և Ռուսաստանի մերձեցումը և ոչ Գերմանիայի գերիշխանութեան աճումը, որը ամելի ևս անզութ է դարձնում Թիւրքական բեմիմը Ամենաանսիրտ վաշխառուի նման Գերմանիան սպանասիրտ ականատես է Մակեդոնիայում և Փոքր Ասիայում կատարուող բարբարոսութիւնների։ Թէ ինչեր են տեղի ունենում քաղաքակիրթ աշխարհից մոռացուած այդ թշուառ վայրերում և այժմ, դրա մասին թոյլ գաղափար է տալիս մի թղթակցութիւն, որ տպուել է Բաշտեր (№ 117) լրագրում։ Թղթակցի հաղորդածները կասկած չեն թողնում որ ականատեսի նկարագրութիւն է դրուած մեր առաջնակութեան Պոլսից գրում է հետևեալլ։

Թուրքական իժժուութիւնները բնաւ չփոխուեցին վերջին ժամանակները։ Մօտ մի ամիս առաջ տեղի ունեցաւ հետեւալ եղելութիւնը։

Բէթլիսից 8 ժամուայ և Մուշից 8 ժամուայ ճանապարհի վրայ գտնուում է հայկական Խորս գիւղը, բաղկացած 80 անից։ Բնակիչները ունենոր էին հաշւում։ Բաւական շատ տաւար՝ ունչին, ամեն անում կային գարնացանի և աշնացանի համար հատիկների, ինչպէս և ուտելու պաշար։ Գիւղի մէջ կային 15 տուն, որոնք ունեին ամեն մէկը 20—25 շունչ։ Այդպիսի աները ունեին և մի քանի տասնեակ լիրա փոյ։

Ապրիլ 21-ին գիւղը մտաւ 21 ֆիրայիններ Գէորգի գլխաւորութեամբ։ Նըանք մտան գիւղերը ծածուկ, երբ բոլորը քնած էին, և օթևաննեցին երկու աներում, որոնք իրարից հեռու են 50—70 քայլ։ Գիւղի ուսուր, իմանալով այդ բանի մասին, աեղեկութիւն տուաւ թուրքերին։ Գիշերը խա-

զաղ անցաւ, ինչպէս և յաջորդ օրը մինչեւ ժամի 3-ը ճաշից յետոյ Այդ ժամանակ գիւղից գուրս երևացան թուրք զօրքերը, որոնք գնում էին Վաղթենիս գիւղի ուղղութեամբ:

Որովհեաւ շատ յաճախ են կատարում զօրքերի տեղափոխութիւններ, ուստի ընակիշները դրմ վրայ ուշադրութիւն չդարձրին. նրանք հասկացան իրանց դրութեան բոլոր սարսափին, միայն երբ նկատեցին, որ զօրքերը, իսկ նրանց յետեւից և քրդերը սկսեցին շշապատել գիւղը: Զօրքը բաղկացած էր 80 հոգուց: Թրդերի թիւը յայտնի չէ, թէկ ստուար, որովհեաւ արջակայ 15 գիւղից էին հաւաքուել, իրանց գլուխ ունենալով շեյխին:

Զօրքից բաժանուեց ժամանակերիւայի զիլաւոր Միբալայ Ալա թէ — իդէթ փաշա 15 զինուորներով: Դիմելով գիւղը նրանք մտան այսինդ գերեզմանատնի և եկեղեցու կողմից: Ազէթ-փաշան կանչել տուեց իր մտաւունին և նրա եղբօր Դաւոյին: Այս վերջնը գիւղում ամենահարուստն էր համարւում և մեծ պատիւ էր փայելում: Նրա գերդաստուռը բաղկացած էր 85 հոգուց և տունը կատարեալ բարեկեցութեան մէջ էր իդէթ փաշան հարցրեց Դավոյին, թէ ուր են փիդայները: Նա պատասխան նուց թէ զիւղում փիդայիները շլան: Խոկ հարցուուիրձի ենթարկուած ուսւը լայտննեց թէ նրանք գիւղում են և ցոյց տուեց նրանց տան վրայ: Ռէսը միայն խնդրում էր թուլաւութիւն գուրս բերել գիւղացիներին գիւղից և փիդայիներին թուղնել իդէթ փաշային: Սակայն փաշան բարկանալով Դավոյի վրայ, սուստ խօսելու համար տեղն ու տեղը նրան սպանեց սեփական ձեռքով: Այն ժամանակ ուսւը փախաւ իր տուն, խոկ զինուորները ընկան Դավոյի մարմին վրայ, կառոր կառոր արին նրան դաշոյներով, հանեցին աշքերը, մերկացրին և վեցրին նրա քօտիում եղած 15 ոսկին, որ սպանուած ծը ստացել էր մի թէշ առաջ իր հօտի մի մասի վաճառումից:

Դաւոյի վրայ գնդակ արձակելուց յետոյ բոլոր գիւղացիները փախան իրանց աները, խոկ զինուորները, որոնք շշապատել էին գիւղը ներս իտու մեցին և շշապատեցին այն տունը, ուր թագնուած էր փիդայիների զիլաւորը: Բարձրանալով տան կտուը, զինուորները հեթիկից կրակում էին տան ներսը, սակայն փիդայիները չէին պատասխանում: Տեսնելով որ հրացանաձուութիւնը չի ընդհատուում, միւս տնուում եղած փիդայիները գուրս եկան ընկերներին օդինելու Սկսուեց հրացանաձուութիւն որ անեց մինչեւ յութը կոխելը: Փիդայիներից ոչ ոք չէր սպանուած, խոկ թիւրքերից սպանուած են 8 հոգի և վիրաւորած 4-ը: Երբ վրայ հասաւ մութը Փիդայիները զուրս պըրծան գիւղից: Երբ թուրքերը իմացան որ Փիդայիները հեռացել են, նրանք վրայ թափուեցին գիւղը, կոտրատեցին դաները և ուժով ներս խուժեցին աները: Ձինուորները և քրդերը կոտրաւմ էին մագուկները, դուրս էին բերում կարասիները, հանում ընակիշների վրայից փոքր ի շատէ արժէք ունեցող բաները և թողնում վրաները զննուածները: Բոլոր կողոպուտը զինուորները ծախում էին քրդերին չնշին գներով, խոկ նրանք զնում էին ույլերի վրայ և խոկոյն տանում էին իրանց գիւղը: Թրդերը իմանալով թէ որ աեղ են գիւղացիները թագնուած հատիկների պաշարը, գտնում էին այն նորերը և դատարկում, տանում իրանց հետ: Այդպիսով թալանուած էին թէ ցանքսի: և թէ ապրուատի պաշարը: Թրդերը քշեցին բոլոր տանարը որ գըտնուում էր գիւղում: Խնաց միայն այն որ արածում էր սարերում: Կողոպուտը կատարում էր օֆիցիերների աչքի առջեւ: Զիլաւոր օֆիցիերը թոյլ չոտեց կողոպատել միայն ուսւ Դավարի տունը որովհեան նա մատնել էր Փիդայիներին: Ամբողջ գիւղերը շարունակուած էր կողոպուտը, խոկ առաւտեան մօտ, երբ ամեն ինչ թալանուած էր, զինուորները սկսեցին ըռնա-

բարել կանանց և 8 տարեկանից սկսած աղջկներին: Զինայեցին նոյնիսկ դողով պառաւներին: Զինուորները բաժանում էին խմբերով, 5—10 նոյնիսկ 20 հոգի, ընտրում էին իրանց զոհը, քաշում տանում էին նրան իրենթը, կանգնում էին դասն առաջ և հերթով մանում էին թշուառ կնկայ մօտ, որին և բնաբարում էր ով ինչպէս կամենում էր: Թանաբարութեան ենթարկուեցին 90 կանայք: Քըդերը այդ բանում չէին մասնակցում: Զըռռնաբարուեցան միայն ուսի տան կանայք, որնց պաշտպանեց ինքը Ալայրէկը և նրանք, որոնք կարողացան փախչել Զինուորները մորթուեցին և կերած գիւղում եղած զառները (70 հատ): Եւ որովհետեւ գոմշի միսը լաւ համ չի ունենում—դրանց գցեցին հորերի և ջրուրների մէջ: Զինուորները պղծեցին և կողոպատեցին նաև եկեղեցին: Սըրազան զգեստները ծուէն ծուէն էին անում և քըդերը դրանցով զարդարում էին իրանց զգեստները: Զինուորները պոկում էին աւետաբանի թերթերը և որբում իրանց՝ եկեղեցում աղաւեղութիւններ անելուց յետոյ, Քարուքանդ արին եկեղեցու քարեայ սեղանը նրեք օր շաբունակուեցին այդ անգթութիւնները, ապա այդ զինուորները և քըդերը հեռացրուեցին և նրանց փոխարէն բերուեցին 80 նոր զինուորներ, որոնք մինչև օրս մուռմ են այդ գիւղում: Թըրքական սովորութիւնների համեմատ զրանք այգանդ կը մնան երկի շատ տարիներ: Կողոպուտի և բնաութեան ժամանակի թուրք զինուորների ձեռքով սպանուած էին 22 գիւղացիներ (տղամարդ, կին և երեխաններ) և երկուուր վիրաւորուած էին: (Ապա բերած է դրանց մանրամասն ցուցակը):

Բոլոր սոցանուած տղամարդիկ, կանայք և երեխանները սպանուած էին այն ժամանակ, երբ Փիդայինները գիւղից հեռացել էին արդէն: Անզէն բնակիչները ոչ մի ընդգիւմազլութիւն չէին ցոյց տալիս: Բոլոր բնակիչները փախան գիւղից և ապաստան գտան հարեւան գիւղերում: Շատ երեխաններ և կանայք հիւանդացան բանաբարութիւնից յետոյ: 7 յդի կանայք վիժեցին դրանից յետոյ, Նըրկու հզօր եւրոպական պետութիւնների հիւպատունները մանրամասն զիսեն բոլոր անցած դարձածի մասին: սակայն նըրանք նոյնիսկ ճետաբքըռուեցին մինչև այժմ գնալ այնտեղ և ջարդի հետևանքներին ականատես լինել: Նըր հիւպատուններից մէկը բերանացի խիստ բողոքեց կատարուած անգթութիւնների առիթով—վալին պաշտօնապէս յայանեց, նոյնպէս բերանացի, որ այդպէս է քարում նորըն մեծութեան Սուլթանի կարգադրութեամբ, որ իր, վալին վրայ պարագ է դրել—քարուքանդ անել իւրաքանչիւր գիւղ, ուր երևան Փիդայինները: Եւ մեծ պետութեան հիւպատոսը, ինչպէս երևում է, բոլորը մինչեւ լսել որ վալին այդպիսի յայտաբարութիւնը ըստ արժանւոյն զնահատուած լինէր...

Ահա ձեզ մի ամենաչնչին կտոր այն իրականութիւնից, որի պաշտպանը հանդիսանում է գլխաւորաբար Վիլհելմ Ա-ը և նրա հետ նաև միւս եւրոպական պետութիւնները, որոնք խլեցին Ռուսաստանի ձեռքից թշուառ թիւրքաց-Հայաստանը որ մեղնեն նրան 30 տարինների անլուր տանջանքների մէջ: Բիւմարկի խորհուրդներով ղեկավարուող այդ Բերլինի վեհաժողովի կատարած «մարդասիրական» գործով Statu quo-ն իրքն թէ պահպանուեց: մինչդեռ միայն կոյրը չի կարող տեսնել որ այդ Statu quo-ն, երկրի նախնական դրութիւնը փոխեց միայն ի նպաստ Գերմանիայի...»

Յուլիսի 22-ին ն. տ., ժամը 1<sup>1</sup>/<sub>4</sub> կէսօրից անց, Սելամլի-քից յետոյ անյայտ մարդու ձեռքով նետուած ոռւմբից սպա-նուեցին և վիրաւորուեցին Սուլթանի շքախումբից և թուրք զի-նուորներից մոտ 100 մարդիկ։ Սուլթանը մնաց ողջ Կասկածը ընկնում է մակեդոնացիների և հայերի վրայ, Այսօր հեռագրնե-րում տպուած էր հետևեալ լուրը.

Կ. Պոլիս, Յ օգոստոսի Անգլիական դեսպանը զօրեղ բողոք ներ-կայացրեց այն բանութիւնների առիթով, որ Դիարբեքիրում Համբիդիչ զօր-ը ըս գործել է հայերի գէմ Ելդի սպանութեան փորձի ժամանակ։ Սուլթա-նական գվարդիայի բոլոր ալբանացիները և արաբները զարհուրած պայ-թումից փախան և միայն թիւրքական գվարդիան, որ բազկացած էր կա-րսչելի ցեղի զինուորներից, մնաց տեղում և մերկացրեց սրերը սուլթանի պաշտպանութեան համար։ Այդ պատճառով սուլթանը հրատարակեց իրադէ որ Բէշիքթաշում, Օրթաքէօյում և պալատի շրջականներում պահակութիւն անող բոլոր ժանդառները ընտրուեն բացառապէս յիշեալ ցեղի զուտ-ա-րիւն թիւրքերի միջից։

Այդ մը պետութեան մէջ է ընդունուած որ այս կամ այն յանցաւորի պատճառով ջարդեն, տանջեն, սպանեն, բռնաբարեն նրա ազգակից խաղաղ, անզէն, անմեղ ժողովուրդը։—Ոչ մի, բացի օսմաննեան պետութիւնից։ Ահա համաթուրքական տեն-չանքների իդէալ մի պետութիւն...

Լ. Ս.

Յ օգոստոսի: